մտածում՝ որ այդ փրկարար չեն իւրեանց որդւոց համար. ունենալ խոնաւ գոմի անկիւնում չոր փայտը ձեռին կանգնած մի մոլած ուսուցիչ և դորան անուանել ուսումնարան, այդ չէ ժամանակի պահանջածը և Պ. Եհշափառի ցանկացածը, այլ պահանջում են նորանցից ունենալ ժամանակի պահանջման համաձայն բարեկարգ ուսումնարաններ. բարեկարգ ուսումնարաններ ունենալու համար հարկաւոր է ունենալ լաւ ուսուցիչներ, լաւ ուսուցիչների համար էլ հարկաւոր է լաւ վարձք, առատ ռոճիկ, իսկ ուսուցչի համար բաւականացուցիչ ռոճիկ տալը այդ առհասարակ մեզանում անծանօթ է. թողունք բարձր դասակարգերը, գո՛նէ այնքան վարձք չեն համաձայնում տալ, որ փոքր ի շատէ ուսման հոտ առած՝ ուսուցչութեան նշանակութիւն և պարտքը հասկացող և ճանաչող անձինք էլ է յանձնառու լինէին այդ պաշտօնին. Նոքա կարծում են, որ իւրեանց բաւական էր՝ եթէ ունենային իւրեանց գիւղերում տարեկան երեսուն կամ քառասուն ռուբլի վարձով ծառայող մի մի հոգմարած մարդիկներ, որպիսիք գտնւումին մինչև ցայսօր միայն մեծամեծ գիւղերում. Եթէ հասարակութիւնը դեռ ևս չըգիտէ այդ կոպիտ անձանց՝ վարժապետ կարծեցեալ տգէտներու մանուկ սերունդի վերայ ունեցած զարհուրելի հետևանքը. այդպիսի ուսուցիչները մատաղ սերունդի միտքը պատառելուց՝ նորա ճոխ քանքարը փչացնելուց՝ ուղեղն և բանականութիւնը ցնդելուց բթացնելուց և խոպան սպաննելուց բացի՝ ոչինչ չգիտեն.

Մեք չեղուեցանք փոքր ինչ, պէտք է ասէինք, որ բարեկրօն վերատեսուչ Քահանայն առայժմ շատ ու շատ դժուարութիւն է կրում մանկավարժ ուսուցիչներ գտնելու համար, թէև պիտոյ է ասել, որ մեզանում առհասարակ զգալի կարօտութիւն կայ մանկավարժ ուսուցիչների, բայց այնու ամենայնիւ պէտք է աշխատել. Տէր Սահիխանեանցը տեղեկանալու համար թէ՝ գտնւո՞ւմ են արդեօք գիւղական տիրացուների և կամ քահանաների մէջ այնպիսիք, որք ընդունակ և կարող լինէին գոնէ առայժմ կատարել կեդրոնական ուսումնարաններում ուսուցչութեան պաշտօնը, դորա համար հարցնել Ախալքալակում գտնուող նշանաւոր գիւղերից քահանայք և տիրացու վարժապետներ՝ և նորանց միջից մի՛ քանիսը ընտրել է և այդ օրը դատախօսութիւն է արել.

Լսեցինք, որ Պ. Վերատեսուչը՝ իւր այստեղից գնալու ատեն գաւառիս Շինական կեդրոնական ուսումնարանների վերայ իւր օգնական է նշանակել Խորէն Քահանայ Բարսեղեանցը, որոյ գործունէութիւնը արդէն յայտնի է.

ԿԱՐԱՊԵՏ ՏԷՐ ՍԱՐԳՍԵԱՆ

15 Սեպտ. 1875 —ի

ՅԱխալքալաք:

Այս նամակի վերայ անելիք մեր դիտողութիւնքը յաջորդ թերթերու կըթողումք:

---

## Ի ՉԱԼԹՐԷ.

---

### Խմբագրութեան Արարատ ամսագրոյ.

Հոգաբարձութիւնս Հոգևոր-Ծխական Դպրոցի Չալթր գեղջ Նոր-Նախիջևանի՝ ընդունելով յայսմիկ աւուրս զերկու հազար ընտիր ագիւս (տեղական գնով քանեհինգ ռուբլեաց արժողութիւն ունի) ի Նախիջևանցի Պ. Խաչատուր Հաշնարեանէ ի պէտս վառարանի Նորակառոյց դպրոցի սոյնոյ գեղջ, այսու խոնարհաբար խնդրէ ի . . . . Խմբագրութենէդ՝ մի՛ բացասել տեղի տալ գրութեանս այսմիկ յանկեան ուրեք ի պատուական թերթից Ազգայնոյս Արարատայն ի հրատարակումն խորին շնորհակալութեան ի կողմանէ Հոգաբարձութեանս առ յիշատակեալ նուիրատու Պ. Խաչատուր Հաշնարեանն.

Հոգաբարձու և Երեցփոխանս

ՄԵԼՔՈՆ ՔԱՀ. ՏԷՐ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆՑ.

10 Սեպտ. 1875 —ի

Ի Չալթր.